

ՆՈՒՅՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ԹՈՐԱԲԻ

18-րդ դարի հայ բանաստեղծ Սայաթ-Նովայի տաղերի հարուստ բառապաշարում քիչ չեն նույնանունները, որոնք լեզվաբանական տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Աշուղի տաղերում առկա զանազան փոխառությունները, բարբառային բառերը, բառերի յուրահատուկ գործածությունը, որոնք պայմանավորված են բանաստեղծական և գեղարվեստական ոճի պահանջներով, առաջացրել են նույնանունների շարքեր:

Հոդվածում հեղինակը ներկայացնում է Սայաթ-Նովայի տաղերում առկա նույնանունները: Ներկայացված նույնանուն կառույցներն ունեն խոսքիմասային, իմաստային, բառաքերականական և ծագումնաբանական բազմազանություն: Ըստ այդմ, առանձնացվել են երկանդամ, եռանդամ, քառանդամ և հնգադամ նույնանունական կառույցներ: Տաղերի նույնանունները կամ համանունները հեղինակի կողմից նախ դասդասվել են ըստ բաղադրիչների քանակի, այնուհետև ներկայացվել դրանց հնչյունական կազմի, իմաստային-ձևաբանական, բառային-քերականական, շարահյուսական և այլ առանձնահատկությունները, առաջացման աղբյուրները և պատճառները, ոճաբանական գործածությունները:

Բանալի բառեր – *Սայաթ-Նովա, խաղեր, նույնանուն, բարբառ, միջին հայերեն, գրաբար, փոխառություններ*

Բառագիտության կարևոր հարցերից մեկը բառերի ձևաիմաստային խմբերի քննությունն է, որը ներառում է նաև նույնանունության կամ համանունության և համանունների կամ նույնանունների հարցը: *Համանուն* կամ *նույնանուն* եզրույթը (համ+անուն կամ նույն+անուն) ցույց է տալիս մեկից ավելի, նվազագույնը երկու բառեր, որոնք հնչյունական կազմով նույնական են: Աշուղ Սուքիասյանը նշում է, որ իդեալական կլիներ, եթե յուրաքանչյուր երևույթ կամ առարկա ունենար իրեն բնորոշող հնչյունների մեկ խումբ, սակայն ոչ մի լեզվում այդպես չէ¹: Տարբեր հասկացություններ հաճախ հատկանշվում են մեկ բառով: Այս իրողությունն էլ պատճառ է դառնում, որ առաջանան ձևով նույնը, սակայն իմաստով տարբեր բառեր: Ըստ Աշուղ Սուքիասյանի՝ «Համանուններ են կոչվում երկու և ավելի այն բառերը, որոնք նույնն են գրությամբ (հնչյունական կազմով) կամ արտասանությամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ քերականորեն կամ էլ և՛ իմաստաբա-

¹ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Եր., 1999, էջ 114:

նորեն, և՛ քերականորեն միաժամանակ»²:

Մոտավորապես նման բնորոշման ենք հանդիպում մի շարք հայագետների աշխատություններում. այսպես՝ Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Ս. Մինասյանը, Ա. Սարգսյանը, Ա. Մարությունը, Ռ. Ղազարյանը և այլք բնորոշում են որպես «ձևով նույնը, իմաստով տարբեր»³, Ֆ. Խլղաթյանը անվանում է «տարիմաստ լեզվական միավորների արտաքին հնչյունական նույնություն ունեցող»⁴ բառեր:

Հայ լեզվաբանները համանուններն ըստ իմաստի, ձևի և կազմության խմբավորում են մի շարք եղանակներով և համապատասխանաբար գործածում են հետևյալ եզրույթները՝ *բացարձակ*, *բառական*, *բառային*, *բուն*, *լիակատար*, *լրիվ*, *համագիր*, *համարմատ*, *համահունչ*, *համահնչյուն*, *համաձև*, *նույնական*, *նունահիմք*, *նույնահունչ*, *նույնագիր* և *մասնակի*, *տարահիմք*, *տարարմատ*, *քերականական*, *բառաքերականական*, *խառք*, ըստ բաղադրիչների՝ *երկանդամ*, *եռանդամ*, *քառանդամ* և այլն:

20-րդ դարի երկրորդ կեսին մի քանի լեզվաբաններ՝ Է. Աղայան, Ա. Սուքիասյան, Գ. Ջահուկյան և այլք, համանունների շարքին էին դասում նաև հարանունները: Ըստ Է. Աղայանի՝ «Մասնակի համանունների մի տեսակն են ձևով իրար մոտ, իմաստով տարբեր բառերը, որոնք կոչվում են հարանուններ»⁵: Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը «Համանուն բառեր» վերնագրով բաժնում զետեղում են հարանուն բառերը, որոնց մասին գրում են. «*Հարանուն* են կոչվում այն բառերը, որոնք ձևով մոտ են, իսկ իմաստով տարբեր»⁶: Ներկայումս լեզվաբանները հստակեցրել են *համանուն-հարանուն* եզրույթների սահմանները և հարանունը դիտարկում են որպես առանձին ձևաիմաստային խումբ: Նշենք նաև, որ համանունության համար կարևոր պայման է պատմական միևնույն ժամանակին պատկանելը, այսինքն՝ այն համաժամանակյա իրողություն է: Լեզվի պատմության տարբեր շրջանների բառերը որպես համանուններ չեն կարող դիտարկվել, քանի որ կարող են ունենալ տարբեր գրություններ կամ լինել բազմիմաստ բառի իմաստներից մեկը⁷: Համաժամանակային իրողություն լինելը հաստատվում է նաև գրական լեզվի տարբեր որակներում համանունների քանակը համեմատելիս: Ասվածը առարկայորեն ներկայացրել է Ռ. Ղազարյանը՝ դիտարկելով գրաբարի և միջին հայերենի համանունների առանձնա-

² Նույն տեղում, էջ 115:

³ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Եր., 1976, էջ 85: Տե՛ս նաև՝ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Եր., 1984, էջ 85: Ա. Մարություն, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, էջ 238: Ա. Սարգսյան, Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007, էջ 22: Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Եր., 2010, էջ 157 և այլն:

⁴ Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976, էջ 88:

⁵ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 66:

⁶ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 85:

⁷ Այդ մասին տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 115:

հատկությունները. «Եթե հաշվի չենք առնում գրաբարյան բառերը, ապա համանունների շարքերը միջին հայերենում զգալիորեն կրճատվում են, ըստ որում համանունների խմբեր կազմող բառերը, ի տարբերություն գրաբարի, շատ մեծ թիվ չեն կազմում: Այդ բոլորով հանդերձ, այնուամենայնիվ, համանունությունը միջին հայերենում տարածված երևույթ է»⁸: Ըստ Ռ. Շալունցի՝ ժամանակակից հայերենի համանունները կազմում են ընդհանուր բառային կազմի երկու տոկոսը⁹:

Ինչպես հայտնի է, նույնանունների գերակշիռ մասը բաղկացած է անկախ բառերի երկու բաղադրիչից, այսինքն՝ արտահայտում է երկանդամ իմաստային հարաբերություն: Սայաթ-Նովան ստեղծագործել է Թիֆլիսի բարբառով, և նրա տաղերում արտացոլված են Թիֆլիսի բարբառի հնչյունական, բառիմաստային, քերականական և շարահյուսական առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված է նաև բարբառային ձևերի համանունության գերակշռությունը: Ա. Մուքիասյանը համանունների առաջացման պատճառ է համարում ոչ միայն գրական լեզվի բառերի, այլև գրական և բարբառային բառերի պատահական նմանությունը: Այդ մասին նաև գրում է. «Համանուն բառերի առաջացումը ժամանակակից հայերենում պայմանավորված է ինչպես իմաստաբանական, այնպես էլ ոչ իմաստաբանական պատճառներով»¹⁰: Ոչ իմաստաբանական պատճառներից մեկն էլ հենց պատահական նմանությունն է:

Բարբառային հիմքով պայմանավորված նույնանունները առանձին չենք դիտարկում և ներկայացնում ենք շարադրանքի ընթացքում:

1. Երկանդամ նույնանուններ: Մեր հաշվումներով Սայաթ-Նովան իր խաղերում գործածել է երկանդամ համանունների վաթսուն գույգեր:

1.1 Հնչյունաքերականական նույնանունություն. Սայաթ-Նովայի երկբաղադրիչ համանունների մեջ առանձնացնում ենք *Ս* և *է* ձայնավորներից բաղկացած հնչյունաքերականական նույնանունությունը: Այսպես, Թիֆլիսի բարբառում *է* օժանդակ բայը փոխակերպվում է «*ս*»-ի, որը համանուն է *ս(յ)* կոչական բառին՝ Թիֆլիսի բարբառում *ս* արտասանությամբ: Սայաթ-Նովան տաղերում հիմնականում գործածում է գրական հայերենին բնորոշ *է* օժանդակ բայը, բայց երբեմն էլ՝ *ս*: Օրինակ՝ «Թե ռուխսաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով *ս*»¹¹(59), «Իմ տիղըս բըռնողըն ով *ս*» (59) և «Հանգ իս արի, յա ր, *ս* յար» (56): Համանունության օրինակ է մաշտոցյան այբուբենի յոթերորդ՝ *է* տառը. «Է Ը էրեսիտ դի թո ու այիբ թո» (այսինքն՝ թաթ-երեսիդ դիր թաթ, այսինքն՝ համեստ ու ամոթխած եղիր»¹² (54) և *է* օժանդակ բայը.

⁸ Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 157:

⁹ Տե՛ս Ռ. Շալունց, Արդի հայերենի համանունների դպրոցական բառարան, Եր., 1980:

¹⁰ Ա. Մուքիասյան, նշվ. աշխ., էջ 119:

¹¹ Այս և հետագա բոլոր օրինակները ըստ՝ «Սայաթ-Նովա, Խաղեր», Եր., 1987: Փակագծերում խաղերի համարներն են:

¹² Մի շարք բառերի բացատրություններ ընտրված են ըստ Արմենակ Քոչոյանի

«Էրեւրտ է շամս ու դամար» (22) օրինակներում:

1.2 Բուն կամ բացարձակ, նույնահունչ և նույնագիր համանուններ. հանգավորման նպատակով էլ եղանակավորող բառը դարձել է *ալ*՝ համանուն կազմելով *ալ*՝ «կարմիր» ածականի հետ: «Քի սագ գուքա ալ դումաշըն, նագա՛նի» (47) և «Նրանից ձեռըտ քաշիլըն շատ ա՛ էտ *ալ* արմանալու» (51):

1.3 Միևնույն խոսքի մասերով կազմված համանունություն. Այս կարգի համանունները կոչվում են նաև բառային և ամենից տարածված ձևն են: Նույն խոսքի մասին պատկանող բառերի խմբում առանձնանում են լիակատար նույնանունները, որոնք համընկնում են քերականական բոլոր ձևերով¹³:

Գոյական – գոյական: *Արաբ* - «Միվ արաբի ճակտի վրա խալ անիլըն ինչի՞ն է շահ» (44) և *Արաբ*՝ «Արաբստան»- «Մայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի» (37): Այս օրինակներում տեսնում ենք, որ հասարակ գոյականները և ածականները հատուկ անվան գործառույթ ստանալիս դառնում են համանուններ:

Դալ բրբ.՝ «ճյուղ» - «Հաքիլ իս ատլաս թուրլու զար ու խաս՝ սալբու դալ բովուն» (34) և *դալ* բրբ.՝ «մոր առաջին կաթը»-«Մի մոր ծծած, մի մոր դալ իս» (3): *Շաղ*՝ «ցող» - «նամ շաղ էկած ռեհան» (19) և *շաղ*՝ «շաղ տալ» հարադիր բայի գոյականական անդամ - «շա՛ղ տու վրբես» (4):

Գոյական – ածական: *Սուր*՝ «թուր» - «Ա՛ չկի լուս, ո՞ւր իմ ասի, *Սուր* չիմ ասի, *սուր* չիմ ասի» (35) և *սուր*՝ «հատու» - «Թերթերուկըտ նիտ ու նաշտար, սուր դալամթրաշ, նագանի» (26): *Քաշ*՝ «կշիռ» - «Թեզուզ քու քաշըն մարբըրիտ տան» (33) և *քաշ*՝ «կախ» - «Դաստա- դաստա մագըտ քաշ ա» (3) :

Բայ: *Ածիլ*՝ 1) «լցնել», 2) «դատարկել», 3) «թափել» և *Ածիլ*՝ «նվազել»:

1.4 Տարբեր խոսքի մասերով բաղադրված համանունություն:

Գոյական – բայ: *Ապրիլ* - «Անցկացավ ապրիլ-մայիսըն, մեկ օր չը հարցըրիր յարին» (52) և *Ապրիլ* - «Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քեզի պես նաղաշ, նագա՛նի» (26): Ինչպես նկատում ենք, այս դեպքում նույնանությունն առաջացել է անորոշ դերբայի՝ Թիֆլիսի բարբառին բնորոշ *ի* խոնարհիչի և *իլ* վերջավորության հետևանքով: *Խաղ* (գոյականով կազմված հարադիր բայ) - «Գընա՛, հինդըն խաղ մի՛ անի» (3) և *Խաղ*՝ «Նըստիմ ու լամ, Ասիմ բարիթավուր խաղըն» (3):

Գոյական – շաղկապ: Կամ՝ «ցանկություն» - «Չարը գթավ նըրան տըվին իրար կամ» (58) և *Կամ*՝ շաղկապ - «Կամ թե գուրձավուր իմ, բեքարա խայաթ» (57):

Գոյական – ձայնարկություն: *Սհ*՝ «վախ» - «Հուջրես լիքն է անգին լալով, ջավահիրչուն ահ իմ բերի» (10) և *Սհ*՝ վշտի, ցավի բացականչությո-

«Մայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանի» (Եր.,1963) և Մորուս Հասրայթյանի «Մայաթ-Նովայի խաղերի ժողովածուի», (Եր.,1959):

¹³ Տե՛ս **Ս. Մինասյան**, Արդի հայոց լեզու, Ստեփանակերտ, 1999, էջ 55:

յուն- «Թեգուզ հագար դարդ ունենամ, յիս սրբտումրս ա՛հ չիմ ասի» (24): *Թաղ*՝ 1) պատուհանի կամ դռան կամարածն շարված մասը, կամար, թաղակապ, դուռ, պատուհան: –«Աշխարհըս մե փանջարա է, –թաղերումեն բեզարիլ իմ» (41), 2) Նման, կամարածն, լուսապսակ - «Յիրգնուց լուսըն վըրետ կամար-թաղ արին» (45) և 3) գետնատարած բույսերի ճյուղերը և նրա թուփը - «Շամամնիրըտ թաղի մեչըն, ման իս գալի բաղի մեչըն» (32):

Դերանուն – եղանակավորող բառ: *Ամեն*՝ 1) «բոլոր», 2) «յուրաքանչ-յուր» - «Ամեն սազի մեչըն գոված դուն թամամ տասըն իս, քամանչա » (1) և *Ամեն*՝ «իսկապես, արդարև, թող լինի» - «Ամեն աստված, յիս՝ մողսու վուրթի Արութինս... գլուխ դրի ամենան խաղին» (4): *Ով*՝ «Ով չէ տեսի՝ մեկ՝ ա իս կոնե» (38) և *ով*՝ կոչական բառ - «Ո վ ջավա հիր» (56), «անգաճ արա՛, ո վ աչկի լուս» (24):

Անորոշ դերանուն – բայական արգելական մասնիկ: *Մի* - «Վարթն մի ամիս ումբըր ունե» (25) և *մի* - «Յարին բեղամաղ մի՛ անի» (3):

Կապ-շաղկապ: *Ամա*՝ «համար» - «Խաղի դավթար իմ քիզ ամա» (17) և *ամա*՝ «բայց» - «Գըլուխ դրի ամենան խաղին, ամա... սորվեցա քամանչեն ու չոնգուրըն ու ամբուրեն» (1):

1.5 Բարբառային ձևերի գուգադիպությունը առաջացած նույնանունություն.

Հայերեն – հայերեն: *Հուս* < *հյուսք* - «Մազիրըդ ռեհան, կըլապիտոն, հուսիրըտ շարբար» (48) և *հուս* < *հույս* - «Ով ունեցավ հուս ու հավատ» (58): *Հուսալ* - «Հուսամ Սայաթ-Նովես, միղքիրըս քավիմ» (58) և Թիֆլիսի բրբ.՝ *հուսալ* < *հոսել* - «Ման իմ գալի, արտասունքըս հուսալով» (14): *Հուսիլ* < *հյուսել* - «Դաստամազըտ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի» (31) և *հուսիլ* < *հոսել* - «Աչկեմես արտասունք հուսիլ իմ ուզում» (11): *Հուր* - «Անհանգչիլի հուր իս, ախպե՛ր» (8) և *հուր* < *հյուր* - «Ուրախացի, ուրախացու չունքի միզ մող հուր իս, ախպեր» (8): *Մեր* < *մայր* - «Քու մերըն ինձի մեր անին» (47) և *մեր* - «Մե խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է» (61): *Վունց*՝ «ոչ» - «Վունց Հընդու դիարումըն կա, վունց Փըռանգի սուրաթումըն» (4) և *վունց*՝ «ինչպես» հարցա-հարաբերական դերանուն- «Խըմողըն վո՛ւնց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ախպե՛ր» (8): *Վուր*՝ «ոք» ստորադասական շաղկապ - «Թե գուզիս, վուր դադաստան չը տեսնիս՝ վանք սիրե, անապատ սիրե» (36) և *վուր*՝ «մի» անորոշ դերանուն- «Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն՝ սուք» (43):

Թիֆլիսի բարբառին բնորոշ լեզվական միավորների քերականական ձևերից ևս կարող են կազմվել մասնակի նույնանիշներ: Օրինակ՝ *տիս*՝ «տեսնել» բայի հրամայական - «Գերեզմանըս վաղ տիս» (25) և *տիս* գոյական՝ «այց, տեսություն» իմաստով - «Գոգալի տիսուն կարոտ իմ» (21):

Հայերեն – օտարալեզու միավոր: Համանուն այս գույգերում հանդիպում են թե՛ փոխառություններ և թե՛ օտարալեզու բառեր, որոնք բնորոշ են միայն Սայաթ-Նովայի խաղերի լեզվին: Թիֆլիսի բրբո. *նուր*

< հյ. *նոր*- «Երեսըտ նուր լուսնի նման քանի կեհա կու բուլըրվի» (31), «Ձընի տակեն նուր դուս էկած» (39) և արաբերեն *նուր* «լույս» - «Ինչ աչկ քիզ խայան մըտիկ տա, ջանում յար, կուր իմ ասի, նուր չիմ ասի, նուր չիմ ասի» (35): *Յար*՝ «սիրելի» - «Մայաթ-Նովեն քու յարըն է» (47) և *յարա* բարբառային բառի կարճ ձևը՝ *յար*- «Ո՞վ ասավ թե նահախ տիղ յարիտ մեչըն յար անին» (47): *Չանգ*՝ «ճանկ» - «ղայիմ չանգ ունե» (12) և պարսկերեն *չանգ*- «երաժշտական գործիք, տավիղ» - «Մանթուր ու քամանչա չանգ իս» (3): *Չար*- «Վո՞ւնց դիմանամ էսչափ չարին» (6) և *չար*՝ «ցար» պատմաբառ, որն առաջացել է թուրքերենում և պարսկերենում *չ* հնչյունի բացակայության պատճառով- «Աչկ ու ունքըտ վիր իս թողի հուքմըտ մե րուս չարի բարբաթ» (49): *Քար*- «Դու անգին քար իս, գովե՛լի» (4) և պարսկերեն *քար*՝ «օգուտ» - «Յիղ կեհաս, քար չիս անի» (1), այսինքն՝ «չես օգնի»:

Արաբերեն – Թիֆլիսի բարբառ: Համանուններ կարող են առաջանալ երբ փոխառության ժամանակ փոխառյալ բառը ձևով նմանվում է բնիկ հայերեն բառին¹⁴: Արաբ. *բաս*՝ 1) «գրույց, խոսակցություն» - «Արի նըստի, Մայաթ-Նովա, խոսկըտ ասա լամզ ու բասով» (39), 2) «գույգ, համապատասխանող ընկեր» - «Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի բասն իս, քամանչա» (42) և Թիֆ. բրբ. *բաս*- «սպա, հապա» «Բաս քու էշ-խին վո՞ւնց դիմանամ» (31):

1.6 Փոխառյալ բառերով կազմված համանունություն. նույնալեզու կամ տարալեզու համադրություններ: Համանունական այս խմբերի կազմում անդամներից որևէ մեկը կամ երկուսը, ինչպես և բոլոր անդամները փոխառություն են տարբեր լեզուներից:

Հայերեն – արաբերեն: *Համ*- «Աշխարեմեն բեգարիլ իմ, էլ բերանու մըս համ չը կա» (59) և արաբ. *համ*՝ «վիշտ տխրություն» - «Էտ փըրսանդով համ իս անում» (3): *Հիդ*՝ բազմիմաստ *հետ* կապով- «Ման իմ գալի դիլդարի հիդ» (7) և արաբ. *հիդ*՝ 1) «սուր», 2) «կատաղի» - «Ամեն մարթ չի կանա մըտնի, էշխիտ ջուրըն հիդ է, գալում» (27):

Հայերեն – պարսկերեն: *Սար*- «Մեջլումի պես սարըն իմ նընգի» (19) և պրս. *սար*՝ «գլուխ»- «Գըլուխըս չարեն ռադ անիմ, սարըս մունաթ չը քաշե» (10)

Պարսկերեն – պարսկերեն: Տվյալ դեպքում ունենք միևնույն օտար լեզվից փոխառված նույնաձև բառեր: *Արբաթ*՝ 1) «ճարտար» - «Քանի կուզե արբաթ ըլի, դուլըն աղին դավ տալու չէ» (37), 2) «պատիժ, փորձանք» - «Սիբունութինըտ էլավ արբաթ» (22) և *արբաթ*՝ «բազմատեսակ» - «Մայաթ-Նովեն իմ, էնդուր գուլամ, դարդիրըս արբաթ» (48): *Դար*՝ «դեղ, ճար, հնար» - «Վունչինչ դարով չը լավացավ, միլամըս յարին մնաց» (30) և *դար*՝ «կախադան» - «Մե մարթ չըկեր ազատիլ էր, Մայաթ-Նովեն դարին մնաց» (30): *Խամ*՝ «հասարակ» - «Թե խամ հաքնիս, թե գար հաքնիս, կու շինիս դումաշ, նազանի» (26) և *խամ*՝ «անփորձ» - «Բազի մարթ չէ քաշի,

¹⁴ Տե՛ս **Ֆ. Խղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2009, էջ 147:

Էշխեմեն է իսամ» (12): *Լալա*՝ «կակաչ» - «Խաղ կանչինք հանգով, լալեքըն ռանգով» (34) և *լալա* (պրսկ. լելե)՝ «թագավորական պալատի սենեկապետ» - «Շահ-Աբասի լալի նրման, շահի վեր գալուն մրնում է» (52): *Չարա*՝ «միջոց, ճար» - «Ասաց. Իմ դիդեմեն քիզ չրկա չարա» (18) և *չարա*՝ «վրան» - «Խաթաբանդով չարա-չարդադ, քողկ ու ամարաթըն դուն իս» (28): *Չամ*՝ «թաս» կամ «կաթաս», փոխաբերաբար՝ «սիրո ընպանակ» - «Չամ իս չինի, դոշըտ է սինի» (3) և *ջամ*՝ «ընտիր ապակի կամ հայելի» - «Չամ-հալիլա, լալ ու թիլա» (13): *Մազ*՝ «նվագարան» - «քիզ գովիմ սագով» (34) և *սազ*՝ «հարմար» - «Քի սազ գուքա ալ դումաշըն» (47): *Փարա*՝ «սպիտակ». այս ածականը փոխաբերաբար ունի «չքնադ, սքանչելի» իմաստը - «Արեգագի նրման փարա իս գոգա լ» (13) և *փարա*՝ «մաս» - «Էս ին խունիի ջիգարըն հագար փարա մի՛ անի» (61): Երկրորդը փոխաբերաբար նշանակում է՝ «ինձ մի՛ տանջիր»:

Պարսկերեն *ռանգ*՝ «գույն» բառով և նրա *րանգ* հնչյունական տարբերակով կազմվել է երկու գույզ նույնանունական հարաբերություն: *Ռանգ*՝ «գույն» - «վարթի ռանգ իս» (3) և *ռանգ*՝ «հույս» - «ռանգ ու ռուքար իմ քիզ ամա» (17): *Րանգ* (ռանգ)- «րանգ ու ռուքար իմ քիզ ամա» (17) և *րանգ*՝ «խարդախություն» - «Ռադիփըն էկավ միզ, էս րանգիըն մեմեկ» (15):

Պարսկերեն – վրացերեն: *Խան*՝ 1) «պաշտոնյա, նահանգապետ Իրանում», 2) «Վրաց թագավորների տիտղոսը իրանական տիրապետության ժամանակ» - «Խանի պես դիվան իս անում» (3) և *խան*՝ վրացերեն «երբեմն, մերթ» - «խան հիդ կեհամ խան գուքամ» (12):

Արաբերեն – արաբերեն: *Ղադա*՝ «չափ, մեծություն» - «Ափսուսալու հագար ափսուս, յիս էս դադա դար ունենամ» (29) և *դադա*՝ «հիվանդություն, դժբախտություն» - «Մայթ-Նովեն առնե դադեն» (4): *Հեքիմ*՝ «բժիշկ» - «Ի նչ կոնիմ հեքիմըն» (18) և *հեքիմ / հաքիմ*՝ «դատավոր» - «Հեքիմ ու դատաստան չրկա» (30): *Շարթ*՝ «անհալ մեղր» - «Լիզուտ քաղցր ունիս, շաքար ու շարթին» (14) և *շարթ*՝ «պայման» - «Աթամ վուր էտ շարթն արավ» (58):

Արաբերեն – պարսկերեն: Տարբեր լեզուներից փոխառված տարբեր բառեր կարող են ձևով համընկնել: Արաբ. *զարար*՝ 1) «վնաս» - «Տերըն ասաց- չո տիք էս բար, թե չէ կու տեսնիլ մինձ զարար» (58), 2) «կորուստ գործի կամ առևտրի մեջ» - «Ասաց թե. Քի զարար շինեցիր շահըտ» (18), 3) «անհուսալի վիճակ» - «Էշխեմետ հիվանդացիլ իմ, վո ննգ զարար, վո ննգ շահ ին ասում» (39) և պրսկ. *զարար*՝ «համեմատ» - «Հիռու տիդաց են գալիս իմ, խիլքի զարար շահ իմ բերի» (10): *Թարադ* (դաբադ)՝ «կաշեգործ» - «Շահի գուրիաթ թաբադըն չի հարցընի դուգուն դադըն» (3) [Շահի արքայական կաշեգործը խարանում, դադում է մաշկը՝ հաշվի չառնելով վերքերը] և պրսկ. *թարադ*՝ «մեծ մատուցարան» - «Հասիլ է ծոցիտ շամամըն՝ օսկե թաբադին կարոտ է» (23) :

1.7 *Բառաբերականական և քերականական համանունություն.*

Բառաքերականական համանունները նույնագիր և նույնահնչյուն են, երբ բառի արտաքին հնչյունական ձևը զուգադիպում է մեկ այլ բառի կա՛մ հոլովական, կա՛մ խոնարհման, կա՛մ էլ հոդառության ժամանակ առաջացած փոփոխված ձևին: Համանուններից մեկը կարող է լինել քերականորեն չփոխված բառ, իսկ մյուսը առաջանալ բառերի քերականորեն փոփոխված ձևերից¹⁵: Սայաթ-Նովայի խաղերում Արձանագրել ենք հետևյալ բառաքերականական համանունները. բրբ. *էլի*՝ «դարձյալ, կրկին» - «Էլի վիրջումըն մեյդանըն Ռոստոմի Չալուն մընում է» (52) և *էլի*՝ «լինել» բայի վաղակատարի բարբառային ձևը- «Լեյլի, Մեջլումըն էլ չի էլի էս հալով» (14), «Բաց իս էլի դուն գուլի պես» (3): *Բու*՝ «ես» անձնական դերանվան սեռական հոլովը- «Չիս հարցընում իմ հալըս» (61), «Քի վարթըն էրից, ինձ՝ իմ յարըն» (7): *Բու*՝ «է» էական բայի սահմանական եղանակի առաջին դեմքը՝ *եմ* ձևը Թիֆլիսի բարբառում (այս ձևը հանդիպում է գրեթե բոլոր խաղերում)- «Կովկիթըս կոտրիլ իմ, հարսից խռով իմ» (62): *Լի*՝ «առատ» - «Էլ յի՛ս կու քաշիմ էս դուսեն, թուղ լի ահուգար ունենամ» (5) և *լի*՝ «լինել» բայի սեղմված ձևը Թիֆլիսի բարբառում- «Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու» (7): *Տալ*- «Ձեռիդ ունիս թաս, լցնիս ու ինձ տաս» (34) և *տալ*՝ Թիֆլիսի բարբառով ներգործական սեռի բայ «կտրել» իմաստով - «Գըլուխըս արա տալ, թաքա՛վուր» (37): Վերջին համանունները առաջացել են *տալ*՝ «հանձնել, փոխանցել» և բարբառային *տալ*՝ «կտրել» նույնանուն բայերի քերականական ձևերից, ուստի կոչվում են *քերականական համանուններ*:

1.8 Բառախաղով կերտված համանունություն:

Արաբերեն *գայ* և *գայան* բառերով Սայաթ-Նովան ստեղծել է հետևյալ բառախաղը. *Չայան*՝ «կորուստ, վնաս» - «Շա՛հըն էր քաշի, չէր դիմանա էս իմ քաշած գայանին» (47) և *գայան*՝ արաբերեն *գայ*՝ «քաղցր», «հոգի» բառին գումարել է *Աննա* անվան առաջին վանկը- «Յիս կանչում իմ գայանին» (47), այսինքն՝ «Ես կանչում եմ քաղցր Աննային» (վրաց Հերակլ Երկրորդ թագավորի քույրը, որին ձոնում է խաղը Սայաթ-Նովան)¹⁶: Բառախաղի տողատակին Արմենակ Քոչոյանը տալիս է նաև Մորուս Հասարթյանի մեկնաբանությունը: «Յիս կանչում իմ գայանին, նու ու այիբ գայ անին» (47). այս տողը պետք է հասկանալ այսպես՝ «Ես կանչում եմ քաղցր, հոգի Աննային», Նովային (նու) և Աննային (այիբ) ուզում են անտեղի կորստի մատնեն՝ փչացնեն¹⁷:

Թաքավուր՝ «միապետ, արքա» - «Դուն ինքնակալ թաքավուր իս» (1) և *թաքավուր*՝ բառախաղ՝ կազմված բրբ. *թաք*՝ «լոկ» և *ավուր* (գրաբ. *որ* բառի սեռական) - «Հազար տարին մարթու աչկին թաքավուր» (55), այսինքն՝ 1000 տարին մարդու համար մեկ օր է թվում¹⁸:

¹⁵ Տե՛ս **Ա. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 22:

¹⁶ Տե՛ս **Ա. Քոչոյան**, նշվ. աշխ., էջ 67:

¹⁷ Տե՛ս նույն տեղը և **Մ. Հասարթյան**, նշվ. աշխ., հայերեն 11-րդ խաղի ծանոթագրությունը, էջ 28:

¹⁸ Բառախաղի բացատրությունն ըստ՝ **Մ. Հասարթյան**, նշվ. աշխ., էջ 68:

Նույն նախադասության մեջ *մերան* հնչյունակազմի կրկնության միջոցով Սայաթ-Նովան բառախաղով ստեղծում է բանաստեղծական հետևյալ տողը. «Յիս կանչում իմ մերանին, ըսկսըպընական մերանին» (47): *Մերան* առաջին բառը կազմված է *մեր* անձնական դերանունից և Աննա անձնանունից, երկրորդ *մերան* բառն ունի «մակարդ» իմաստը: «- Յիս կանչում իմ մերանին», այսինքն՝ «Ես կանչում եմ մեր Աննային» (47):

Գրությամբ տարբեր (տվյալ դեպքում՝ միացման գծիկով և առանց գծիկի) լեզվական միավորներից նախադասություն-բառախաղ է կազմվել «սայ-ադ» աղբբեջաներեն «հաշվիր» - «Սայաթ-Նովեն իմ, *սայադ*, անունըս հաշվիր *սայ-ադ*» (57): «Սայադ» արաբերեն բառն ունի «որ-տորդ» իմաստը: Այսպես՝ «Յարալու ջեյրան իս դառի, յիս քու էդնետ՝ ավչի-սայադ» (57):

Տարալեզու բաղադրիչներից՝ պարսկերեն *հազար*՝ և արաբերեն *հազար*՝ «հանգիստ, խաղաղ կյանք» բառերով է կազմված հետևյալ բառախաղ-նախադասությունը. «Հազարին հազար պիտի» (57), այսինքն՝ «սոխակին խաղաղություն է պետք»:

Քարասուն բառի *քարասուն* բարբառային ձևով և *քար*, *սյուն* և *ասուն* բառակազմական բաղադրիչներով կերտված եռանդամ նույնանուններով հետաքրքիր բառախաղ է հետևյալը՝ *քարասուն*՝ «40» - «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն» (55), *քարասուն*՝ «քարե սյուն» - «Հազար տարին մարթու աչկըն քարասուն» (55) և *քարասուն*՝ *քար+ասուն* - «Ո՛վ է մընացի աշխարումըս քարասուն» (55):

2. Եռանդամ համանունություն: Ինչպես արդեն նշեցինք, երկանդամ նույնանունները քանակապես գերազանցում են, և Սայաթ-Նովայի տաղերում առանձնացրել ենք եռանդամ նույնանունության ընդամենը յոթ եռյակ՝ կազմված համանուն բառերին բնորոշ հատկանիշներով: Այսպես՝ պարսկերենից փոխառյալ բաղադրիչներով են *դամ*՝ «որոգայթ, ցանց» - «Շամամնիրըս դամ իս անում» (3), *դամ*՝ միայն «դամ քաշիլ» արտահայտության մեջ՝ «պղնձե ամանի վրա կրակ շարել, որպեսզի խուփի տակ հավաքված ջուրը նորից գոլորշիանա և ծծվի փլավի մեջ»¹⁹ - «Օխչրի միսն ասավ. «Իմ մէչն է համը, Կու դընին փլավումըն, կու քաշին դամը»» (63) և *դամ*՝ «ուրախ ժամանց» - «Դամ ու դովրան իս համաշա» (3): *խար*՝ «փուշ» - «Յիս վարթըն իմ մին խար չունիմ» (50), *խար*՝ «վարդի թփի որդ, միջատ» - «Կարմիր վարթըն խարին մընաց» (30) և *խար*՝ «ստոր, անարգ» - «Շատ սիրուն իս Շախաթայի ասողին խար չիս անի» (1):

Հայերեն և պարսկերեն լեզվական միավորներից կերտված եռանդամ նույնանունություն է. 1) հայ. *լալ*- «Դու մի՛ լացի, յի ս իմ լալու» (7), պրսկ. *լալ*՝ «մունջ, համր» - «Վայ թե հասրաթետ մեռնիմ, բըլբուլ լիզուս լալ անին» (47) և պրսկ. *լալ*՝ «թանկագին քար» - «Հուջըրես լիքն է անգին

¹⁹ Տե՛ս Ա. Քոչոյան, նշվ. աշխ., էջ 58:

լալով» (10): 2) *Շահ*՝ «օգուտ» - «Հիռու տիղացեն գալիս իմ, խիլքի զարար շահ իմ բերի» (10), պրսկ. *շահ*՝ «պարսից թագավոր» - «Մարթ իր խոսկով կու ճանանչվի, գուգե Շահի վեգիր ինին» (49) և պրսկ. *շահ*՝ «բագե՛ շահեն» - «Ամեն մարթ չի կանա ճանգի շահով շքար, Սայաթ-Նովա» (43):

Հայերեն և արաբերեն լեզվական միավորներից կերտված եռանդամ նույնանունություն է. 1) *Հազար*- «Հազար բարաթ բան կոսիս» (2), արաբ. *հազար*՝ «հանգիստ, խաղաղ կյանք» - «Հազարին հազար պիտի» (65) և արաբ. *Հազար*՝ «տխակ» - «Հազարին հազար պիտի երած սրտերին ճար պիտի» (65): 2) *Շար*՝ «ուլունք, զարդարանք» - «Դոշիտ պիտի լալ ու ալմաս շարերով» (32), *շար*՝ «շարք» - «Իրեք քրսան ու տասըն խալըն երեսիտ բուրքըն շար ա» (27) և արաբ. *շար*՝ «արդարություն, օրենք» - «Խըրա՛ տ սիրե, սա բըր սիրե, շա՛ ր սիրե» (36):

3. Քառանդամություն կազմող համանուններ: Սայաթ-Նովայի տաղերում հանդիպում է ընդամենը մեկ քառյակ նույնանունների խումբ՝ բաղադրված պարսկերեն բառերից: *Ձար*՝ «ոսկի» - «Աչկերուտ ունքիրըտ էլավ մուհաջար, Թերթերուկիտ մազըն՝ զար, օսկու զարնիջ» (47), *զար*՝ «ոսկեթել գործվածք» - «Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն երված իմ» (48), *զար*՝ «շատ հասարակ կտավ»²⁰ - «Թե խամ հաքնիս, թե զար հաքնիս, կու շինիս դումաշ, նագա՛ նի» (26) և *զար*՝ «ողբ, լաց» - «Քանի կանչիմ դարդ ու փիրյադ, զարի ձեռնեմեն դադ կոնիմ» (60):

4. Հինգ անդամից բաղկացած նույնանունություն: Հնգանդամ այս եզակի կառույցը բառախաղային է: Այսպես՝ *հասասե* թուրքերեն *հասաս*՝ «պահակ, գիշերապահ» բառից և էօժանդակ բայից - «Մահը վուր կա, առանց կաշառք հասասե» (55), *հասասե*՝ «խոսք ասել» - «Մե մարթ չը կա, վուր ինձ խրատ հասասե» (55), *հասասե*՝ «հասնելու մոտ է, հասեհաս է» - «Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասե» (55), *հասասե*՝ բառախաղ՝ կազմված *հա* բացականչականից, աղբբեջաներեն *ասս* «ձայն» բառից և հայերեն էօժանդակ բայից - «Անգաճ կալա, չիմացա ինչ հասասե» (55) և *հասասե*՝ կազմված է *հասնել* և *սե* (հայերեն այբուբենի *Ստառի* անունը) - «Հասա ոա է, հասա ջե, հասասե»²¹ (55):

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սայաթ-Նովան իր տաղերում գործածել է բազմաթիվ նույնանուններ, որոնք պատճառաբանվում են բանաստեղծական հանգավորմամբ, գեղարվեստական ոճի պահանջներով և Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերի ու քերականական ձևայինների կիրառությամբ: Ինչպես և սպասելի էր, քանակապես գերակշռում են երկանդամ կառույցները, տաղերում գործածված են ընդամենը յոթ եռանդամ նույնանունության եռյակ և քառանդամ ու հնգանդամ նույնանունության մեկական օրինակ: Նույնա-

²⁰ Տե՛ս **Մ. Նարյան**, Բանասիրական մանրապատումներ, «Սովետական Հայաստան», 28 մարտի, 1963 թ., № 74 (128090):

²¹ Այս բառերի բացատրության մասին տե՛ս **Մ. Հասարթյան**, նշվ. աշխ.:

նուն կառույցները ունեն խոսքիմասային, իմաստային, բառաքերականական, ծագումնաբանական բազմազանություն, որտեղ, ընդհանուր առմամբ, բառաքերականական համանունները՝ մասնիկավոր բառաձևերը, քանակական նկատելի առավելություն ունեն: Մայաթ-Նովայի բանաստեղծության օտարալեզու բառապաշարը ևս համանուն կառույցների մաս է: Աշուղի բանաստեղծական խոսքին ոճական գունավորում են տալիս հատկապես քերականական մասնիկներով և փոխառություններով կազմված բառախաղերը:

МАРИАМ ТОРАБИ – Омонимы в тагах Саят-Новы. – В богатом словарном запасе стихотворений (тагов) армянского поэта 18-ого века Саят-Новы использовано немало омонимов. Различные заимствования, диалектические единицы, особенное употребление слов в сочинениях ашуга, обусловленные требованиями поэтического и художественного стиля, создали ряды омонимов.

В настоящей статье автор представляет омонимы, существующие в тагах Саят-Новы. Представленные омонимические образования имеют смысловые, речевые, грамматические и корневые многообразия.

В связи с этим выделены двухчленные, трехчленные, четырехчленные и пятичленные омонимические образования.

Ключевые слова: *Саят-Нова, ашуг, омонимы, диалект, среднеармянский язык, древнеармянский язык, заимствованные слова*

MARYAM TORABI – Homonyms in Sayat-Nova's Poems. – In the rich vocabulary of the poems of the Armenian poet (ashugh) of the 18th century Sayat-Nova, many homonyms are used. Various borrowings, dialectical units, special usage of words in the works of the ashugh, by the requirements of the poetic and artistic style, created a series of homonyms.

In this article, the author presents the homonyms that exist in the poems of Sayat-Nova. The presented homonymous formations have semantic, speech, grammatical and root varieties.

In this regard, two-membered, three-membered, four-membered and five-membered homonymous formations are singled out.

Key words: *Sayat-Nova, poem, homonyms, dialect, middle Armenian language (Grabar), loan words*